Ակտ

07.11.2011թ. **գ.Արևածագ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Արևածագի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Արևածագ համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ս. Բաղդասարյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ՝ Ռ. Հարությունյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 15102.3 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 13527.4 հազ. դրամ, կամ կատարվել են 89.6%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 9933.6 հազ. դրամի դիմաց կազմել է 8358.7 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 84.2%:

Սեփական եկամուտներից թերակատարվել են հողի հարկի գանձումները՝ 13.1 հազ. դրամով, գույքահարկը՝ 404.7 հազ. դրամով և պահուստային հողերի և գույքի վարձակալության վճարները՝ 1408.7 հազ. դրամով:

2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները նվազել և կազմել են 80.5%, այդ թվում սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 43.6%-ով: Թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի, պահուստային հողերի և գույքի վարձավճարների հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	2010թվական			Առ 01.10.2011թ.		
	Նախա-տեսված է	Փաստացի	%	Նախա-տեսված է	Փաստացի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**15102.3**	**13527.4**	**89.6**	**10701.8**	**8612.3**	**80.5**
Հողի հարկ	6964.2	6951.1	99.8	5039.0	4309.1	85.5

Գույքահարկ	941.4	536.7	57.0	640.0	265.4	41.5
Տեղական տուրք	48.0	56.0	116.7	153.0	47.0	30.7
Պահ. հողերի և գույքի վարձավճարներ	1960.0	552.2	28.2	1445.0	711.0	49.2
Այլ մուտքեր	20.0	262.7	875.3	15.0	50.0	333.3
Ընդամենը սեփական եկամուտներ	**9933.6**	**8358.7**	**84.2**	**7292.0**	**3179.8**	**43.6**
Պետական բյուջից տրվող դոտացիա	4568.7	4568.7	100.0	3229.8	3229.8	100.0
Անասնաբուժական ծառայություն	600.0	600.0	100.0	180.0	-	
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-			
ԸՆԴԱՄԵՆԸ	**15102.3**	**13527.4**	**89.6**	**10701.8**	**8612.3**	**80.5**

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով հողի հարկի ապառքները 01.01.2011թ. դրությամբ կազմել են 15216.5 հազ. դրամ, որից 2011թ. բյուջեում մտցվել է 3112.5 հազ. դրամը, գույքահարկը՝ 3570.6 հազ.դրամից՝ 65.3հազ. դրամը, պահուստային հողերի վարձավճարները՝ 1020.0 հազ. դրամից՝ 180.0 հազ. դրամը:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 13675.7 հազ. դրամ, իսկ 2011թ. հոկտեմբերի 1- ի դրությամբ՝ 8884.5 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. 9 ամիսներին

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.	Ստ.01.10.2011թ.
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***13106.7***	***8233.8***
Աշխատավարձեր և հավելավճարներ	5892.2	4411.0
Սոցիալական ապահովության վճարներ	1318.2	897.2
Էներգետիկ ծառայություններ	380.0	305.0
Կոմունալ ծառայություններ	195.0	145.0
Ներքին գործուղումներ	291.2	205.8
Կառավարչական ծառայություններ	18.0	-
Համակարգչային ծառայություններ	20.0	-
Տեղեկատվական ծառայություններ	52.8	16.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	150.0	-
Մասնագիտական ծառայություններ	137.6	-
Շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում	1161.0	
Գրասենյակային նյութեր	100.0	75.0
Տրանսպորտային նյութեր	450.0	300.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	218.5	
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	88.4	
Այլ դրամաշնորհներ	685.6	607.0
Սոցիալական օգնություններ	1908.2	1251.9
Այլ ծախսեր	40.0	20.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***569.0***	***650.7***
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում		650.7
Մեքենաներ և սարքավորումներ	569.0	
ԸՆԴԱՄԵՆԸ	***13675.7***	***8884.5***

Հաշվապահական հաշվառումը վարվում է թերություններով, չի տարվել մեմորիալ-օրդերային եղանակով, կատարված ֆինանսական գործառույթներին հաշվային պլանին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չեն տրվել:

Գանձապահի հետ չի կնքվել պայմանագիրը՝ նյութական պատասխանատվության և իրեն հանձնված դրամական միջոցների պահպանման վերաբերյալ: Դրամարկղի գիրքը լրացվում է թերություններով և բացթողումներով, դրամարկղային գրքում չեն լրացվել վճարման ցուցակների համարները, թղթակցող հաշիվները, կամ խախտվել է «Դրամարկղային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Որոշ դեպքերում գանձված հարկերը և վարձավճարները բանկ են մուծվում ուշացումներով:

Գործուղման տրամադրելու վերաբերյալ տրված կարգադրություններում և հրամաններում հստակ չեն նշվում գործուղման նպատակը: Հաճախակի մարզպետարան ներկայանալու համար տրամադրվում են գործուղումները 2 օր ժամկետով: Մեր կարծիքով անհիմն է 2 օրով աշխատողներին Վանաձոր մարզպետարան գործուղելը և համայնքի ղեկավարին առաջարկվել է հետագայում բացառել նշված կարգով գործուղումների տրամադրումը:

Ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքի հաճախումների տաբելներում աշխատողներին դրված են ներկաներ 8 ժամ, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի նշված օրերին աշխատողների աշխատաժամանակը կրճատվում է մեկ ժամով:

Աշխատողներին արձակուրդ տրամադրելու հրամանները կամ կարգադրությունները տրվում են ուշացումներով, արձակուրդային վճարները վճարվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել արձակուրդ մեկնելուց առնվազը երեք օր առաջ:

Աշխատողների աշխատավարձերի հաշվարկման գիրք չի պահվում, որը համարվում է ֆինանսական կարևոր փաստաթուղթ և ենթակա է ավելի երկար ժամանակով պահպանման, քան մյուս ֆինանսական փաստաթղթերը:

Ուսանողների ուսման վճարներ փոխանցման ժամանակ բացակայում են ուսումնական հաստատությունից տրվող հաշիվ ապրանքագրեր:

Գնված ապրանքանյութական արժեքների ծախսերը հիմնավորող փաստաթղթերը լրացվում են թերություններով՝ չեն լրացվում մուտքի և ելքի ապրանքագրեր, պահանջագրեր: Բենզինի ծախսը հիմնավորող երթուղային թերթիկները նույնպես լրացվում են թերություններով:

Համայնքի տարածքում գործում են երեք մթերային խանութներ, որոնց համար տեղական տուրք է սահմանվել ալկահոլային խմիչքների վաճառքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար, ամսական՝ 5000 դրամ, կամ խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ կետի 1-ի և 2-րդ ենթակետերի պահանջները՝ ըստ որի վերը նշված տեղական տուրքերը պետք է սահմանվեին եռամսյակային կտրվածքով, ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար առանձին, իսկ ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ առանձին: 2011թ. համար նախատեսված տեղական տուրքը երեք տնտեսավարող սուբյեկտներից համապատասխան թույլտվություն ստանալու համար մինչև ստուգման օրը գանձվել էր 46.0 հազ.դրամ, կամ նրանք վարել են անօրինական գործունեություն: Պակաս գանձված 134.0 հազ. դրամը հանձնաժողովի համապատասխան պարզաբանունից հետո տնտեսավարող սուբյեկտներից գանձվեց ամբողջությամբ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Արևածագ համայնքի ավագանին կայացրել է 11 նիստ, ընդունել է 33 որոշում:

2010 թվականի ընթացքում Արևածագ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

Հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի 3-րդ եռամսյակի հաղորդումը.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության).

2010 և 2011 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ուղարկվել են պետական իրավական փորձաքննության).

որոշում է կայացրել «Լոռու մարզի Արևածագ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծման մասին, հաստատել է կանոնադրությունը, գույքի փոխանցման ակտը, տվել է տնօրեն նշանակելու համաձայնություն, հաստատել է կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, սահմանել է աշխատաժամանակը.

սահմանել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

15.02.2010թ. թիվ 3 որոշմամբ 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու փոխարեն Արևածագ համայնքի ղեկավարի 2009թ.-ի կատարած աշխատանքները համարվել է լավ:

15.02.2010թ. թիվ 5-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված չէ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Ավագանուն չի ներկայացվել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի 1-ին և 2-րդ եռամսյակների հաղորդումները:

2011 թվականի նոյեմբերի 2-ի դրությամբ Արևածագ համայնքի ավագանին կայացրել է 5 նիստ, ընդունել է 12 որոշում: Երկու անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 3-րդ նիստը կայացել է 04.05.2011թ.-ին, 4-րդը՝ 14.07.2011թ.-ին, 5-րդը՝ 04.10.2011թ.-ին:

2011 թվականի ընթացքում համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

հաստատել է հողային հաշվեկշիռը:

14.02.2011թ. թիվ 1 որոշմամբ 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու փոխարեն Արևածագ համայնքի ղեկավարի 2010թ.-ի կատարած աշխատանքները համարվել է բավարար:

Հիմնականում համայնքի ավագանու որոշումների նախաբաններում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները:

Համայնքում առկա է 2 ցուցատախտակ, որոնցից մեկը գյուղապետարանում է, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ փակցված չէին: Ըստ աշխատակազմի քարտուղարի հայտարարության որոշումները փակցվում են, սակայն որոշ ժամանակ անց բնակիչների կողմից որոշումները պոկվում են: Առաջարկվել է միջոցներ ձեռնարկել, որպեսզի ավագանու որոշումները փակցված մնան ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան; գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կացմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կացմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է, կան որոշ թերություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 12 հավելվածով հաստատված Արևածագի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 4-ն են:

2. Համայնքի ղեկավարի 1997թ. փետրվարի 28-ի թիվ 02 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը: Կանոնադրությամբ նախատեսված մի շարք դրույթներ չեն համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության պահանջներին: Այս առումով համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն աշխատակազմի կանոնադրությունում:

3. Համայնքի ավագանու 23.12.2010թ. N 29 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4.ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի <<Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին>> N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջները և համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանները սկսել են վարել միայն 2010թվականից:

Բացի այդ հաշվառման մատյանները թերի են լրացվում և չեն կատարվել վերոնշյալ որոշման 2-րդ հավելվածի 3-րդ կետի << ը >>, << թ >>, << ժ >>, <<ժդ >> ենթակետերի պահանջները:

5. Ըստ համայնքի ղեկավարի որոշումների մատյանի համայնքի նախկին ղեկավարի 2007 թվականի փետրվարի 2-ի N 4 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը, սակայն որոշմանը կցված չեն պաշտոնների անձնագրերը: Աշխատակազմի առաջին կարգի մասնագետներ Գագիկ Շերմազանյանի և Անահիտ Անդրեասյանի անձնական գործերում առկա էր համապատասխանաբար 2007 թվականի փետրվարի (առանց ամսաթվի) թիվ 2 որոշման N 4 և N 5 հավելվածները: Այսինքն՝ կարելի է փաստել, որ համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը իրականում չեն հաստատվել, քանի որ, համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 2-ի N 2 որոշմամբ՝ աշխատանքից ազատվել է Ս.Անտոնյանը :

Համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 3-ի N 10 որոշման վերնագիրն է <<Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին >>: Իրականում այս որոշմամբ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը համաձայն N N 1-10 հավելվածների և ուժը կորցրած է ճանաչվել պաշտոնների անձնագրերը

հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 2-ի N 4 որոշումը:

Այս առումով՝ խախտվել է <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները, որի համաձայն իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին:

Բացի այդ, համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 3-ի N 10 որոշման ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 12 հավելվածով հաստատված Արևածագի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում եղել են համայնքային ծառայության 6 պաշտոններ, հետևաբար անհասկանալի է, թե N N 7-10 հավելվածներով ինչ պաշտոնների անձնագրեր է հաստատել համայնքի ղեկավարը:

Աշխատակազմի 4 համայնքային ծառայողների անձնական գործերում առկա պաշտոնների անձնագրերում չկա նշում թե երբ են հաստատվել և որ որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 3-ի N 10 որոշման մեջ կամ ուժը կորցրած ճանաչել որոշումը և հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը:

6.Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի խախտմամբ, մասնավորապես՝ առանձին դեպքերում չեն կատարվել կարգի 7-րդ կետի << ա >> , << գ >>, << ե >>, << ժա >>, << ժբ >>, << իա >>, << իդ >> ենթակետերի և 8-րդ կետի պահանջները, առանձին դեպքերում թերի են կատարվել կարգի 7-րդ կետի << դ >>, <<զ >>, <<թ>>, << իդ>> ենթակետերի և 18-րդ կետի պահանջները, լրացել է քարտուղարի անձնագրի վավերականության ժամկետը:

7. Համայնքի ավագանին 2009 թվականի մարտի 13-ին համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին կայացրել է N 10 որոշումը և առաջարկել է համայնքի ղեկավարին սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման նախարարին՝ անվանացանկից աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի պաշտոնը (ծածկագիր՝3.3-1) հանելու առաջարկությամբ: Ընդունած որոշման 2-րդ կետով ավագանին ուժը կորցրած է ճանաչել իր 22.01.2009թ. N 3 որոշմամբ հաստատված համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

2009 թվականի մայիսի 11-ին ավագանին կրկին որոշում է կայացրել և առաջարկել է համայնքի ղեկավարին սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման նախարարին՝ անվանացանկից աշխատակազմի 1-ին (ծածկագիր՝3.2-1) և 2-րդ կարգի (ծածկագիր՝3.3-1) մասնագետների պաշտոնները հանելու առաջարկությամբ և նորից ուժը կորցրած է ճանաչել իր 22.01.2009թ. N 3 որոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 13-ի N 10 որոշումը:

8. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման

հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

<<Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը (ոչ թե կանոնակարգը) հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, իսկ 2008 թվականի դեկտեմբերիի 12-ի N 06-Ն հրամանով աշխատակարգերում կատարվել են փոփոխություններ:

Համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 17-ի N 16 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը(մինչև այդ մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմելու վերաբերյալ չի եղել համայնքի ղեկավարի որոշում):

Համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 18 որոշմամբ ձևակերպվել է, որ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կանոնակարգը, իրականում թե ինչ է հաստատվել պարզ չէ, քանի որ աշխատակազմում չկար կանոնակարգը:

Ըստ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստերի արձանագրության մատյանի 2006 թվականի դեկտեմբերի 28-ին կայացել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ և ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ, 2009 թվականի ապրիլի 17-ի N 16 որոշմամբ հաստատված նոր մրցութային և ատեստավորման հանձնաժողովը աշխատակարգային նիստ չի գումարել :

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը, որից հետո սահմանված ժամկետում հրավիրել հանձնաժողովի աշխատակարգային նիստ, հանձնաժողովի անդամների հետ քննարկել աշխատակարգերը և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի

հունվարի 19-ի N 03-Ն հրամանով, իսկ 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով հաստատված աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգում:

Համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 15-ի N 12-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի ներքին կարգապահական կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

10. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 16-րդ կետով նախատեսված է, որ համայնքների ղեկավարների աշխատակազմերում պետք է վարվի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան, ինչը աշխատակազմում բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է աշխատակազմում ստեղծել և սահմանված կարգով վարել վերը նշված մատյանը:

11. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 26-ի <<Համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին>> N 05-Ն հրամանի համաձայն՝ աշխատակազմում վարվում է գրանցամատյան: Համադրելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացված գրանցամատյանի և համայնքային ծառայողների աշխատանքային գրքույկները՝ պարզվեց, որ աշխատակազմի համայնքային ծառայողների ընդհանուր և համայնքային ծառայության աշխատանքային ստաժների վերաբերյալ տեղեկությունները գրանցամատյանում սխալ են լրացվել: Իրականում վերոնշյալ համայնքային ծառայողների ընդհանուր աշխատանքային ստաժները ավելին են, քան ներկայացվել են գրանցամատյանով:

12. Համայնքի նախին ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 26-ի N 17 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, իսկ 2007 թվականի մարտի 27-ի N 16 կարգադրությամբ՝ առանց հաշվի առնելու իր կողմից 2007 թվականի փետրվարի 2-ին կայացրած N 5 որոշումը կրկին աշխատակազմի աշխատակիցներին ճանաչել է համայնքային ծառայողներ:

Համայնքի ղեկավարը 2009 թվականի մայիսի 25-ի N 21 որոշմամբ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին Ռուզաննա Հարությունյանին նշանակել է առաջատար մասնագետ – հաշվապահի պաշտոնում, առանց հաշվի առնելու , որ օրենքով այդ լիազորությունը վերապահված է աշխատակազմի քարտուղարին:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին և աշխատակազմի

քարտուղարին վերապահված հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու անհարժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումները և կարգադրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Արևածագ համայնքի ղեկավար

---------- Ա. Հովհաննիսյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Արևածագ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

----------Ս. Բաղդասարյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Արևածագ համայնքի աշխատակազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ռ. Հարությունյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

29.12.2011թ. **գ.Այգեհատ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Այգեհատի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Այգեհատ համայնքի ղեկավար Ա. Շահվերդյանը, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Հակոբյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Ա. Կիրակոսյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բյուջեի եկամուտների վերաբերյալ: 2010թ. բյուջեով նախատեսված 8168.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 7267.9 հազ. դրամ, կամ կատարվել են 89.0%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 4068.0 հազ. դրամի դիմաց կազմել է 3169.7 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 77.9%:

Սեփական եկամուտներից թերակատարվել են հողի հարկի գանձումները՝ 1081.2 հազ. դրամով, գույքահարկը՝ 5.5 հազ. դրամով:

2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները նվազել և կազմել են 70.1%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 55.3%-ով: Թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի և պահուստային հողերի վարձավճարների հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	2010թվական			Առ 01.10.2011թ.		
	Նախա-տեսված է	Փաստացի	%	Նախա-տեսված է	Փաստացի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**8168.0**	**7269.7**	**89.0**	**7247.0**	**5081.6**	**70.1**
Հողի հարկ	3449.5	2368.3	68.7	3410.8	2051.9	60.2
Գույքահարկ	108.5	103.0	94.9	111.7	75.3	67.4
Տեղական տուրք	-	12.5	-	15.0	20.0	133.3

Պահուստային հողերի վարձավճարներ	490.0	509.7	104.0	900.0	304.9	33.9
Այլ մուտքեր	20.0	176.2	881.0	-	-	-
Ընդամենը սեփական եկամուտներ	**4068.0**	**3169.7**	**77.9**	**4437.5**	**2452.1**	**55.3**
Պետական բյուջից տրվող դոտացիա	3500.0	3500.0	100.0	2629.5	2629.5	100.0
Անասնաբուժական ծառայություն	600.0	600.0	100.0	180.0	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**8168.0**	**7269.7**	**89.0**	**7247.0**	**5081.6**	**70.1**

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով հողի հարկի ապառքները 01.01.2011թ. դրությամբ կազմել են 13885.4 հազ. դրամ, պահուստային հողերի վարձավճարները՝ 2560.0 հազ. դրամ, գույքահարկը՝ 45.1 հազ. դրամ:

Օտարումներից մուտքերը կազմել են 2010թ.-ին՝ 5042.6 (հողի օտարում), 2011թ.-ին՝ 625.2 հազ. դրամ(գյուղտեխնիկայի օտարում):

Համայնքի բյուջեից իրականացված ծախսերի վերաբերյալ: Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 12321.8 հազ. դրամ, իսկ 2011թ. 9 ամիսներին՝ 5243.9 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. 9 ամիսներին

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	**2010թ.**	**Առ.01.10.2011թ.**
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***7268.8***	***4899.4***
Աշխատավարձեր և հավելավճարներ	4121.4	2878.6
Պարգևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	313.2	-
Սոցիալական ապահովության վճարներ	937.6	610.1
Էներգետիկ ծառայություններ	136.0	102.0
Կոմունալ ծառայություններ	240.0	70.0
Ներքին գործուղումներ	120.0	59.8
Ապահովագրական ծախսեր	-	8.3
Համակարգչային ծառայություններ	21.6	10.8
Տեղեկատվական ծառայություններ	20.8	4.8
Մասնագիտական ծառայություններ	79.2	39.5
Ընթացիկ նորոգում և պահպանում	4.0	
Գրասենյակային նյութեր	40.0	39.5
Տրանսպորտային նյութեր	280.0	66.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	40.0	
Սոցիալական օգնություններ	885.0	1010.0
Այլ ծախսեր	30.0	
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***5053.0***	***344.5***
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	74.3	
Նախագծա-հետազոտական ծախսեր (ջրագիծ)	4978.7	
Մեքենաներ և սարքավորումներ		344.5
ԸՆԴԱՄԵՆԸ	***12321.8***	***5243.9***

Հաշվապահական հաշվառման դրամարկղային գործառնությունների վարման վերաբերյալ: Հաշվապահական հաշվառումը չի կազմակերպվել և վարվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և այն կարգավորող իրավական ակտերի դրույթներին ու պահանջներին համապատասխան: Հաշվապահական հաշվառումը չի տարվել մեմորիալ-օրդերային եղանակով, կատարված ֆինանսական գործառույթներին հաշվային պլանին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չեն տրվել:

Գանձապահի հետ չի կնքվել պայմանագիրը՝ նյութական պատասխանատվության և իրեն հանձնված դրամական միջոցների պահպանման վերաբերյալ: Դրամարկղի գիրքը լրացվում է թերություններով և բացթողումներով, դրամարկղային գրքում չեն լրացվել դրամարկղային մուտքի և ելքի օրդերների համարները, վճարման ցուցակների համարները, թղթակցող հաշիվները, կամ խախտվել է դրամարկղային գործառնությունների վարման կարգը:

Արձակուրդների տրամադրման և աշխատավարձերի ու արձակուրդային վճարների հաշվարկման վերաբերյալ: Աշխատավարձերը հաշվարկվել են բյուջեվ նախատեսված դրույքաչափերով, սակայն աշխատավարձերից եկամտահարկի պահումները իրականացվել են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքների պահանջներին ոչ համապատասխան: Աշխատավարձերից եկամտահարկ 2010թ. ավել է պահվել, իսկ 2011թ.-ին՝ պակաս: Այսպես՝ 2010թ. հունվարին ավել է պահվել 396 դրամ եկամտահարկ, իսկ 2011թ. հունվարին պակաս է պահվել 1709 դրամ: Հաշվապահին տեղում տրվել են համապատասխան մեթոդական ցուցումներ եկամտահարկի պահումների կարգի մասին, առաջարկվել է կատարել աշխատավարձերից պահվող եկամտահարկերի գումարների վերահաշվարկներ և պակաս պահված գումարները փոխանցել պետական բյուջե:

2009թ. դեկտեմբերի 1-ից հունվարի 2-ը համայնքի ղեկավարին տրվել է 32 օրացուցային օր հերթական արձակուրդ: Արձակուրդային օրերի հաշվարկները կատարվել է օրենքի պահանջներին ոչ համապատասխան, համաձայն որի արձակուրդային օրերի հաշվարկի մեջ չեն մտցվում տոն և հիշատակի օրերը: Նշված դեպքում համաձայն «Տոնական և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի դեկտեմբերի 31-ից հունվարի 7-ը Հայաստանի Հանրապետությունում համարվում է ոչ աշխատանքային օրեր, ուստի համայնքի ղեկավարին տրամադրված արձակուրդի վերջնաժամկետը պետք է լինի հունվարի 9-ը: 2010թ. հունիսի 24-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվել է փոփոխություններ, համաձայն որի փոփոխվել է աշխատողներին տրամադրվող արձակուրդային օրերի և արձակուրդային վճարների հաշվարկման կարգը: Ըստ օրենքի նախատեսված է արձակուրդների տրամադրումը աշխատանքային օրերով, սակայն Այգեհատի գյուղապետարանում մինչև օրս աշխատողներին տրամադրվում են արձակուրդներ օրացուցային օրերով (32 օրացուցային օր) և արձակուրդային վճարների հաշվարկները կատարվում են նույնպես օրացուցային օրերով: Առաջարկվել է կատարել 2010թ. օգոստոսից հետո տրամադրված արձակուրդային օրերի արձակուրդային վճարների վերահաշվարկներ:

Համայնքի ղեկավարի 2010թ. դեկտեմբերի 24-ի թիվ 14 կարգադրությամբ գյուղապետին և աշխատակազմի աշխատողներին տրվել են մեկ ամսվա աշխատավարձի չափով պարգևատրումներ, սակայն երեք համայնքային ծառայողներին պարգևատրումներ պետք է տրվել աշխատակազմի քարտուղարի հրամանի համաձայն:

Գործուղումների տրամադրման և գործուղման գումարների հաշվարկման վերաբերյալ: Գործուղման տրամադրելու վերաբերյալ տրված կարգադրություններում և հրամաններում հստակ չեն նշվում գործուղման նպատակը: Հաճախակի մարզպետարան հաշվետվություն ներկայացնելու համար տրամադրվում են գործուղումները 2 օրերով: Մեր կարծիքով անհիմն է 2 օրով աշխատողներին Վանաձոր մարզպետարան գործուղելը և համայնքի ղեկավարին առաջարկվել է հետագայում բացառել նշված կարգով գործուղումների տրամադրումը, քանի որ հաշվետվություն կամ մեկ այլ փաստաթուղթ

ներկայացնելու դեպքում աշխատողը կարող է նույն օրը վերադառնալ աշխատանքի: Հաշվարկների ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ օրապահիկի գումարները հաշվարկվում են ոչ սահմանված կարգով(2000 դրամի փոխարեն հաշվարկվում են 700 դրամ):

2010թ. դեկտեմբերին մի շարք աշխատողների վճարվել են 26400 դրամ գործուղման գումարներ(Ա. Կիրակոսյանին՝ 16000 դրամ, Հ. Հակոբյանին՝ 6400 դրամ, Ս. Շահվերդյանին՝ 4000 դրամ), սակայն բացակայում են սահմանված նմուշի գործուղման թերթիկները և համայնքի ղեկավարի կարգադրությունները կամ աշխատակազմի քարտուղարի հրամանները գուծուղումներ մեկնելու վերաբերյալ:

Կոմունալ ծառայությունների վերաբերյալ: Ծախսերը 2010թ. կազմել են 240.0 հազ. դրամ, 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 70.0 հազ. դրամ: Ծախսերը ուղղվել են համայնքի աղբահանության աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ, պայմանագիր է կնքվել համայնքի բնակիչ Աբգար Թամազյանի հետ, համաձայն որի նա պարտավոր է իրականացնել աղբահանության աշխատանքները, որի համար որպես մատուցված ծառայության արժեք համայնքի բյուջեից նրան հատկացվում է յուրաքանչյուր ամիս 20.0 հազ. դրամ: Պայմանագիրը գրված է թերություններով և բացթողումներով, հստակ չի նշված կողմերի պարտավորությունները և իրավունքները: Համաձայն պայմանագրի այն կարգավորվում է նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, սակայն նշված դեպքում այն ոչ մի կապ չունի համայնքային ծառայության հետ, քանի որ կատարող կողմը համայնքային ծառայող չէ:

Տրանսպորտային ծախսերի վերաբերյալ: Ծախսերը 2010թ. կազմել են 280.0 հազ. դրամ, 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 66.0 հազ. դրամ: Նշված գումարներով գնվել են բենզին և ավտոպահեստամասեր, սակայն բենզինի ծախսերը հիմնավորելու համար չեն լրացվել սահմանված նմուշի երթուղային թերթիկներ, իսկ պահեստամասերի ծախսերը հիմնավորելու համար չեն կազմվել թերությունների և պահեստամասերի տեղադրման ակտեր:

Սոցիալական օգնությունների վերաբերյալ: Ծախսերը 2010թ. կազմել են 885.0 հազ. դրամ, 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 1010.0 հազ. դրամ: Հիմնականում ավագանու որոշմամբ վճարվել է ուսանողների ուսման վճարները:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով կատարված ծախսերի վերաբերյալ(ֆոնդային): 2010թ. ծախսերը կազմել է 5053.0 հազ. դրամ, այդ թվում «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրով ջրագծի վերանորոգման համար համայնքի ներդրում՝ 4978.7 հազ. դրամ, 165 մետր մետաղապլաստե խողովակներ՝ 74.3 հազ. դրամ: Խողովակները գնվել են «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ից, սակայն խողովակների մուտքի և ծախսի վերաբերյալ հաշվապահությունում համապատասխան ձևակերպումներ չեն տրվել:

2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ նշված ուղղությամբ ծախսերը կազմել են 344.5 հազ. դրամ(համակարգիչ, տպիչ սարք, սնուցման սարք):

Կայացված աճուրդների վերաբերյալ: 2010թ. մարտի 4-ին և օգոստոսի 24-ին կայացվել է հողերի օտարման աճուրդներ: 2010թ. մարտի 4-ի աճուրդով վաճառվել է Աղասի Ջավարյանին երկու հողամաս՝ 1350քմ՝ 157500 դրամով, 400քմ.՝ 47250 դրամով և Միրիման Շահվերդյանին՝ 6900դրամով տնամերձի հող:

Օգոստոսի 24-ին կայացված աճուրդով վաճառվել է Աղասի Ջավարյանին երեք հողակտոր՝ 1265քմ.՝ 143000դրամով, 1393քմ.՝ 157000դրամով, 1182քմ.՝ 134000դրամով: Համաձայն արձանագրությունների կատարվել է մեկ քայլ, որից հետո աճուրդը համարվել է կայացված: Երեք հողակտորների համար էլ անկախ

մեկնարկային գնից նվազագույն քայլի չափը սահմանվել է 2000 դրամ, կամ խախտվել է աճուրդի անցկացման կանոնակարգի 5.2 կետի պահանջը, համաձայն որի աճուրդային նվազագույն քայլի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Նվազագույն աճուրդային քայլը 5 տոկոսից ցածր սահմանելու հետևանքով համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 15.4 հազ. դրամ հողի օտարման գումարներ:

Աճուրդների անցկացման փաստաթղթերը և աճուրդային հանձնաժողովի արձանագրությունները լրացվել են թերություններով և բացթողումներով:

Ուղղակի վաճառքով օտարված գյուղտեխնիկայի վերաբերյալ: Ավագանու 06.04.2011թ. թիվ 8 որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական տեխնիկան օտարելու մասին: Նշված գյուղատնտեսական տեխնիկան խորհրդային տնտեսությունների քայքայումից հետո գտնվել են մեխանիզատորների մոտ և օգտագործվել են նրանց կողմից, սակայն սահմանված կարգով նրանց հետ չեն կնքվել վարձակալության պայմանագրեր և տեխնիկային շահագործումից համայնքի բյուջե մուտքեր չեն կատարվել: Ուստի եթե նշված տեխնիկան ներկա դրությամբ գտնվում է անմխիթար վիճակում, ապա դրա համար որոշ պատասխանատվություն են կրում նաև տարիներ շարունակ այն անձնական կարիքների համար օգտագործող մեխանիզատորները: Համայնքի ավագանու որոշմամբ որոշվել է ուղղակի վաճառքով օտարել 14 անուն գյուղատնտեսական մեքենաներ և 22 անուն գյուղգործիքներ՝ նշված տեխնիկան 5 տարի չվաճառելու պայմանով: Վերը նշված որոշմամբ վաճառվել է տրակտորներ և բեռնատար ու ինքնաթափ մեքենաներ՝ 100 դրամից մինչև 148000 դրամով և գյուղատնտեսական գործիքներ(շարքացան, կարտոֆիլ տնկող, հանող, կցասայլ, կուլտիվատոր, մամլիչ և այլն)՝ 6000-33000 դրամով: Ավագանու որոշմամբ երկու տրակտոր(ՄՏԶ -80, ԴՏ- 75) և մեկ հացահատիկահավաք կոմբային (ՍԿ-5) 100-ական դրամով վաճառվել են Ա. Մաթոսյանին, Վ. Շահվերդյանին և Հ. Թամազյանին:

Օտարման ենթակա գյուղտեխնիկայի ցանկը

հհ	Անվանում	Տարեթիվը	Օտարման գինը / դրամ/	Մուծած է /դրամ/	Գնորդի անուն, ազգանուն
1	Տրակտոր S-169	1989	80.000	70.000	Աբգար Թամազյան
2	Տրակտոր S-169	1989	80.000		Խաչատուր Շահվերդյան
3	Տրակտոր S-70	1985	12.000		Խաչատուր Շահվերդյան
4	Տրակտոր ՄՏԶ -80	1987	100.000	100.000	Էդգար Աղվանյան
5	Տրակտոր ՄՏԶ -80	1983	100	100	Ասատուր Մաթոսյան
6	Տրակտոր ՑՈՒՄԶ-Է-264	1986	148.000	148.000	Ալբերտ Շահվերդյան
7	Տրակտոր ԴՏ-75	1986	108.000	108.000	Վարդգես Քուրդոդյան
8	Տրակտոր ԴՏ -75	1990	100	100	Հովիկ Թամազյան
9	Հացահ. կոմբ. ՍԿ-5	1988	100		Վրույր Շահվերդյան
10	Խոտհնձիչ Ե-302	1983	175.000	175.000	Համլետ Թամազյան
11	Բեռնատար ԳԱԶ 53	1984	35.000		Սվետա Շահվերդյան
12	Ինքնաթափ 3507	1987	90.000		Ժորա Աբազյան
13	Ինքնաթափ 3507	1988	70.000		Սերգի Շահվերդյան
14	Ինքնաթափ 3507	1990	90.000		Սերգի Շահվերդյան
15	Շարքացան	1988	13.000		Էդգար Աղվանյան
16	ՕՊՎ-1.2	1989	8.000		Էդգար Աղվանյան
17	Պարարտանյութ ցրիչ	1999	6.000		Էդգար Աղվանյան
18	Կարտոֆիլ տնկող կց.	1987	9.000		Խաչատուր Շահվերդյան
19	Կարտոֆիլ հանող կց.	1987	6.000		Խաչատուր Շահվերդյան
20	Կուլտիվատոր ԿՕՆ 2.8	1988	6.000		Խաչատուր Շահվերդյան
21	Հավաք. Մամլող ՊՍ1.6	1989	16.000		Խաչատուր Շահվերդյան

22	Գութան ՊԱ-4	1990	8.000		Խաչատուր Շահվերդյան
23	Կցասայլ 2 ՊՏՍ	1985	8.000		Ալբերտ Շահվերդյան
24	Գլանակ	1985	2.000		Ալբերտ Շահվերդյան
25	Շարքացան	1989	10.000		Ասատուր Մաթոսյան
26	Գոմաղբ ցր. կցասայլ	1989	8.000		Ասատուր Մաթոսյան
27	Գութան ՊԱ-4	1989	8.000		Վարդգես Քուրդոդլյան
28	Կուլտիվատոր ԿՕՆ 2.8	1990	11.000		Վարդգես Քուրդոդլյան
29	ՕՊՎ-1.2	1990	8.000	8.000	Լևոն Թամազյան
30	Գլանատակառ	1989	6.000	6.000	Լևոն Թամազյան
31	Սերմնացտիչ ՍՄ-4	1989	10.000	10.000	Ավետիք Շահվերդյան
32	Հացահատիկացտիչ	1988	10.000		Վրույր Շահվերդյան
33	Կցասայլ 2-ՊՏՍ	1989	5.000		Էմին Շահվերդյան
34	Հավաքող մամլիչ	1985	13.000		Դավիթ Շահվերդյան
35	Գլանատակառ	1989	33.000		Ցոլակ Շահվերդյան
36	Կերաջարդիչ	1986	13.000		Ռոմիկ Շահվերդյան

Վաճառքի գները սահմանվել են առանց համապատասխան հաշվարկների, հաշվի չեն առնվել նաև գործող շուկայական գները: Վերը նշված գյուղատնտեսական տեխնիկայի գործող շուկայական գները մեր կարծիքով բազմակի անգամ թանկ են ավագանու կողմից սահմանված գներից: Գործող շուկայական գները որոշելու համար անհրաժեշտ էր դիմել նման իրավասություններ ունեցող համապատասխան մասնագետների կամ կազմակերպությունների, որոնց կողմից կներկայացվեր մասնագիտական եզրակացություն գույքի փաստացի վիճակի և գործող շուկայական գների մասին:

Ավագանու որոշումից հետո գնորդների հետ սահմանված կարգով չեն կնքվել առք ու վաճառքի պայմանագրեր, չեն նշվել գումարների մուծման վերջնաժամկետները: Չնայած սահմանված գները բավականին ցածր են գործող շուկայական գներից, սակայն 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ օտարված 36 անուն գյուղտեխնիկայի և գյուղգործիքների գումարներից մուծումներ կատարել են ընդամենը 10-ի համար:

Համայնքի ղեկավարին առաջարկվել է հրավիրել ավագանու արտահերթ նիստ և անվավեր ճանաչել 06.04.2011թ. ավագանու թիվ 8 որոշումը: Համայնքի ղեկավարի կողմից ստուգման ժամանակ ներկայացվել է վերը նշված որոշումը անվավեր ճանաչելու մասին ավագանու նոր որոշում: Անվավեր ճանաչված իրավական ակտը ընդունելու հետ մեկտեղ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ ենթակետի համայնքի ղեկավարին հանձնարարվել է լուծել նաև անվավեր ճանաչելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու հարցերը:

Տեղական տուրքերի և վաճառքի թույլտվությունների վերաբերյալ: Համայնքի տարածքում գործում է 2 մթերային խանութ: Տեղական տուրք է սահմանվել ալկահոլային խմիչքների վաճառքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար եռամյակը՝ 2500 դրամ: Խախտել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ կետի 1-ի և 2-րդ ենթակետերի պահանջները՝ ըստ որի տեղական տուրքերը պետք է սահմանվեին ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար առանձին, իսկ ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ առանձին: Նշված տուրքերի համար 2010թ. բյուջեով գումարների գանձում չի նախատեսվել, սակայն գանձել է 12500 դրամ: 2011թ. համար նախատեսված տեղական տուրքը ամբողջովին գանձվել է:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն

ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Այգեհատ համայնքի ավագանին կայացրել է 6 նիստ, ընդունել է 23 որոշում: Մեկ անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 2-րդ նիստը կայացել է 16.04.2010թ.-ին, 3-րդը՝ 07.07.2010թ.-ին:

2010 թվականի ընթացքում Այգեհատ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

Հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության).

2010 և 2011 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ուղարկվել են պետական իրավական փորձաքննության).

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

11.02.2010թ. թիվ 2 որոշմամբ 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու փոխարեն բավարար է համարվել համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները 2009թ.-ի ընթացքում:

11.02.2010թ. թիվ 3 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Որոշման 3-րդ կետով չեղյալ է համարվել համայնքի ավագանու 2009 թվականի հունիսի 12-ի թիվ 10-Ն որոշումը, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նշված որոշումը պետք է ուժը կորցրած ճանաչվեր: Որոշման 4-րդ կետով հաստատվել է Այգեհատ համայնքի բյուջեի

փոփոխությունները, ինչը նույնպես չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ նորմատիվ իրավական ակտը պետք է կարգավորի միաբնույթ (մեկ ոլորտ կարգավորող) հարաբերություններ:

11.02.2010թ. թիվ 4-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Այգեհատ համայնքի ավագանին կայացրել է 6 նիստ, ընդունել է 18 որոշում: Մեկ անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 5-րդ նիստը կայացել է 02.08.2011թ.-ին, 6-րդը՝ 24.10.2011թ.-ին:

2011 թվականի ընթացքում համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

ի գիտություն է ընդունել 2011 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի I և II եռամսյակների հաղորդումները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

Չի հաստատվել հողային հաշվեկշիռը:

06.04.2011թ. թիվ 8 որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին (գյուղատնտեսական մեքենաներն ու սարքավորումները), հաստատել է տրամադրման պայմանները, սակայն գործընթացը իրականացվել է օրենսդրության պահանջների խախտմամբ: Չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջը՝ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:

Հիմնականում համայնքի ավագանու որոշումների նախաբաններում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները:

Գյուղապետարանում չկա ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ փակցված չէին: Առաջարկվել է տեղադրել ցուցատախտակ, համայնքի ավագանու որոշումները փակցնել ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանում առկա չէ քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 6 հավելվածով հաստատված Այգեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 4-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2009թ. դեկտեմբերի 26-ի N 11 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 25.12.2010թ. N 21 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի << Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին>> N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջները և համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանները սկսել են վարել միայն 2010 թվականից:

Բացի այդ հաշվառման մատյանները թերի են լրացվում և չեն կատարվել վերոնշյալ որոշման 2-րդ հավելվածի 3-րդ կետի << թ >>, << ժ >>, <<ժդ >> ենթակետերի պահանջները:

5. Ըստ համայնքի ղեկավարի որոշումների մատյանի 2007 թվականի հունվարի 24-ի N 3 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը, սակայն որոշմանը կցված չեն պաշտոնների անձնագրերը: Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերում ևս վերոնշյալ որոշմամբ հաստատված պաշտոնների անձնագրերը բացակայում էին: Այսինքն՝ կարելի է փաստել, որ համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը իրականում չեն հաստատվել:

Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշմամբ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը համաձայն NN 1-10 հավելվածների և ուժը կորցրած է ճանաչվել պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 24-ի N 3 որոշումը:

Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշման ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 6 հավելվածով հաստատված Այգեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում եղել են համայնքային ծառայության 5 պաշտոններ, հետևաբար անհասկանալի է, թե NN 6-10 հավելվածներով ինչ պաշտոնների անձնագրեր է հաստատել համայնքի ղեկավարը:

Բացի այդ, համայնքի ավագանին 2009 թվականի հունիսի 12-ին համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին

կայացրել է N 10 որոշումը՝ անվանացանկից աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի պաշտոնը (ծածկագիր՝3.3-1) հանելու վերաբերյալ և ՀՀ տարածքային կառավարման նախարարի հրամանով անվանացանկում կատարվել է փոփոխությունը, սակայն մինչև հիմա համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշման N 4 հավելվածը (երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝3.3-1) պաշտոնի անձնագիրը) ուժը կորցրած չի ճանաչվել:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշման մեջ:

6. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի խախտմամբ, մասնավորապես՝ առանձին դեպքերում չեն կատարվել կարգի 7-րդ կետի << ա >> , << ե >>, ենթակետերի և 8-րդ կետի պահանջները, առանձին դեպքերում թերի են կատարվել կարգի 7-րդ կետի << դ >>, <<զ >>, <<թ >>, ենթակետերի և 18-րդ կետի պահանջները, լրացել է քարտուղարի և առաջին կարգի մասնագետի անձնագրերի վավերականության ժամկետները:

7. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

2009 թվականի մարտի 9-ի N 6 որոշմամբ համայնքի ավագանին հաստատել է հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակը և հանձնաժողովների ամբողջ կազմը:

Բացի այդ համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 11-ի N 12 կարգադրությամբ ևս հաստատվել է հանձնաժողովների կազմը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 9-ի N 6 որոշումը և նոր որոշմամբ հաստատել հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը, ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 11-ի N 12 կարգադրությունը և համայնքի ղեկավարի նոր որոշմամբ հաստատել հանձնաժողովների կազմը :

8. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, իսկ 2008 թվականի դեկտեմբերիի 12-ի N 06-Ն հրամանով աշխատակարգերում կատարվել են փոփոխություններ:

Համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 32 և 2009 թվականի մայիսի 14-ի N 9 որոշումներով ձևակերպվել է, որ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը, իրականում թե ինչ է հաստատվել պարզ չէ, քանի որ աշխատակազմում չկար աշխատակարգերը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը, որից հետո սահմանված ժամկետում հրավիրել

հանձնաժողովի աշխատակարգային նիստ, հանձնաժողովի անդամների հետ քննարկել աշխատակարգերը և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 26-ի <<Համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին>> N 05-Ն հրամանի համաձայն՝ աշխատակազմում վարվում է գրանցամատյան: Համադրելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացված գրանցամատյանի և համայնքային ծառայողների աշխատանքային գրքույկները՝ պարզվեց, որ աշխատակազմի համայնքային ծառայողների ընդհանուր և համայնքային ծառայության աշխատանքային ստաժերի վերաբերյալ տեղեկությունները գրանցամատյանում սխալ են լրացվել:

10. <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլի հարցաշարերը կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: Անտեսելով օրենքի պահանջները, համայնքի ղեկավարը 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 33 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, իսկ 2009 թվականի փետրվարի 26-ի N 5-Ն որոշմամբ՝ թեստավորման փուլի հարցաշարերը:

Համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին վերապահված հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու լիազորություն չունի, հետևաբար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումները:

11. Համայնքի ղեկավարը 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 34 որոշմամբ՝ համայնքային ծառայողներ է համարել << աշխատակազմի քարտուղարին, հաշվապահին և գանձապահին >>, հաշվի չառնելով, որ իր աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում չկա հաշվապահի և գանձապահի պաշտոններ: Հետագայում, իր 2007 թվականի հունվարի 5-ի N 6 և N 7 կարգադրություններով համայնքային ծառայողներ է համարել առաջատար մասնագետ- հաշվապահ Արևհատ Կիրակոսյանին և առաջին կարգի մասնագետ Սուսաննա Շահվերդյանին , անվավեր չճանաչելով 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 34 որոշումը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումը:

12. Համայնքի ղեկավարը իր ամենամյա հերթական արձակուրդ գնալու վերաբերյալ 01.12.2009թ. N 23 և 01.12.2010թ. N 11 կարգադրություններով՝ համայնքի ղեկավարի պարտականությունները դրել է համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

Պետք է նշել, որ << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով համայնքի ղեկավարի պարտականությունների կատարումը աշխատակազմի քարտուղարի կողմից նախատեսված չէ, հետևաբար, համայնքի ղեկավարի վերոնշյալ կարգադրությունները չի բխում օրենքի պահանջներից:

13. .<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները 24.12.2010թ. N 14 կարգադրությամբ աշխատակազմի կրտսեր պաշտոններ զբաղեցնող

համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. և սոց. տնտ. զարգացման վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Անդամներ՝

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Այգեհատ համայնքի ղեկավար

---------- Ա. Շահվերդյան

Այգեհատ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար

---------- Հ. Հակոբյան

Այգեհատ համայնքի աշխատակազմի առաջ. մասնագետ-հաշվապահ

---------- Ա. Կիրակոսյան

Ակտ

05.12.2011թ.

գ. Քարաբերդ

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն (ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Քարաբերդի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Քարաբերդ համայնքի ղեկավար Յու. Շավելյանը, աշխատակազմի քարտուղար՝ Գ. Գրիգորյան, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Ժ. Կոստանդյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 4711.0 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4745.8 հազ. դրամ, կամ կատարվել են 102.9%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 1211.0 հազ. դրամի դիմաց կազմել է 1245.8 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 102.9%:

Սեփական եկամուտներից թերակատարվել են հողի հարկի գանձումները՝ 96.4 հազ. դրամով, գույքահարկը՝ 15.3 հազ.դրամով, այլ մուտքերը՝ 36.0 հազ.դրամով:

2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները աճել և կազմել են 105.3%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 122.0%-ով: Թերակատարվել են գույքահարկի և այլ մուտքերի հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	2010թվական			Առ 01.10.2011թ.		
	Նախա-տեսված է	Փաստա ցի	%	Նախա-տեսված է	Փաստա ցի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4711.0**	**4745.8**	**102.9**	**3479.0**	**3663.3**	**105.3**
Հողի հարկ	227.2	130.8	57.6	100.0	141.8	141.8
Գույքահարկ	81.4	66.1	81.2	44.8	-	-
Պահ.հողերի և գույքի վարձավճարներ	857.4	1040.0	121.3	664.2	896.5	135.0
Այլ մուտքեր	45.0	9.0	20.0	45.0	-	-

Ընդամենը սեփական եկամուտներ	**1211.0**	**1245.8**	**102.9**	**854.0**	**1038.3**	**122.0**
Պետական բյուջից տրվող դոտացիա	3500.0	3500.0	100.0	2625.0	2625.0	100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**4711.0**	**4745.8**	**89.6**	**3479.0**	**3663.3**	**105.3**

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով հողի հարկի ապառքները 01.01.2011թ. դրությամբ կազմել են 501.4 հազ. դրամ, 2011թ. բյուջեում մտցվել է 49.8 հազ. դրամը, պահուստային հողերի վարձավճարները՝ 485.0 հազ. դրամը՝ որը ամբողջովին մտցվել է բյուջե:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 3513.7 հազ. դրամ, իսկ 2011թ. 9 ամիսներին՝ 2883.0 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. 9 ամիսներին

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.	Ստ.01.10.2011թ.
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	**3513.7**	**2883.0**
Աշխատավարձեր և հավելավճարներ	2499.3	2123.8
Սոցիալական ապահովության վճարներ	579.1	482.6
Էներգետիկ ծառայություններ	48.4	28.4
Կոմունալ ծառայություններ	64.1	-
Կապի ծառայություն	-	40.2
Վարչական ծառայություններ	70.0	-
Տեղեկատվական ծառայություններ	58.0	24..0
Մասնագիտական ծառայություններ	15.0	54.0
Գրասենյակային նյութեր	70.0	60.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	61.8	-
Սոցիալական օգնություններ	20.0	30.0
Այլ ծախսեր	28.0	40.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր		
ԸՆԴԱՄԵՆԸ	**3513.7**	**2883.0**

Գանձապահի պարտականությունները դրվել են հաշվապահի վրա, որով խախտվում է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, այն է «Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատողների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը »:

Սեզոնային աշխատող-հանդապահ՝ Գ. Շավեյանի վերջնահաշվարկները կատարվել են ոչ ճիշտ, ինչի հետևանքով 2010 պակաս է վճարվել՝ 1633 դրամ, իսկ 2011թ. ավելի է վճարվել՝ 2058 դրամ:

Միջին աշխատավարձը հաշվարկելու ժամանակ չի մտցվել ստացած պարգևատրումները, իսկ համաձայն աշխատանքային օրենսգրքի 195 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի «...պարգևատրման գումարները միջին աշխատավարձի մեջ հաշվի են առնվում 1/12-ի չափով», որի հետևանքով արձակուրդային գումարների հաշվարկները կատարվել են սխալ կամ պակաս են վճարել՝ 2010թ. Յու. Շավեյանին՝ 5653 դրամ, Գ. Գրիգորյանին՝ 4298 դրամ, Ս. Գուրգենյանին՝ 1659 դրամ, Ժ. Կոստանդյանին՝ 5029 դրամ: 2011 թ. պակաս է հաշվարկվել Գ. Գրիգորյանին՝ 5548 դրամ և Ժ. Կոստանդյանին՝ 5039 դրամ:

Հետարձակուրդային օրերի ոչ ճիշտ հաշվարկելու հետևանքով ավելի հաշվարկել 2010թ. Գ. Գրիգորյանին՝ 1-օր՝ 2058 դրամ և 2011 թ. Ցու. Շավեյանին՝ 2-օր՝ 8000 դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Քարաբերդ համայնքի ավագանին կայացրել է 14 նիստ, ընդունել է 25 որոշում:

2010 թվականի ընթացքում Քարաբերդ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է ավագանու կանոնակարգը (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության).

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության).

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

08.04.2010թ. թիվ 9-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, սակայն գյուղապետարանում փակցված չէ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011 թվականի նոյեմբերի 21-ի դրությամբ Քարաբերդ համայնքի ավագանին կայացրել է 7 նիստ, ընդունել է 17 որոշում: : 2 անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 1-ին նիստը կայացել է 24.01.2011թ.-ին, 2-րդը՝ 06.04.2011թ.-ին; 3-րդ նիստը կայացել է 03.05.2011թ.-ին, 4-րդը՝ 06.08.2011թ.

2011 թվականի ընթացքում Քարաբերդ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (ստուգման պահին գյուղապետարանում բացակայում է որոշման հավելվածը).

2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության, ստուգման պահին գյուղապետարանում բացակայում է որոշման հավելվածը).

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

Չի հաստատվել 2011թ. հողային հաշվեկշիռը:

Ճիշտ է 2011 թվականի տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը ավագանու որոշմամբ հաստատվել են, սակայն փաստացի բոլոր տեսակի տեղական տուրքերը և վճարները հաստատվել են 0-ական դրույքաչափով, ինչը տրամաբանական չէ և համայնքի ղեկավարին առաջարկվել է այսուհետ ավելի հետևողական մոտենալ տեղական տուրքերի դրույքաչափերի սահմանմանը:

01.02.2010թ. թիվ 1 որոշմամբ 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու փոխարեն հավանություն է տրվել համայնքի 2009թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը: Նույնը կատարվել է 24.01.2011թ. թիվ 1 որոշմամբ 2010թ. բյուջերի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելիս: Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նշված որոշումներում «Հավանություն տալ» բառերը փոխարինելով «Հաստատել» բառով:

Հիմնականում համայնքի ավագանու որոշումների նախաբաններում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները:

Գյուղապետարանը գտնվում է վագոն-տնակում և պայմաններից ելնելով գյուղապետարանում չկա ցուցատախտակ, որոշումները փակցվում են գյուղապետարանի պատուհանի ապակիներին, ստուգման ժամանակ փակցված էր 2011թ. մայիս ամսվա ավագանու որոշումը: Առաջարկվել է համայնքում տեղադրել ցուցատախտակ, համայնքի ավագանու որոշումները փակցնել ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան, լրացվում է թերություններով:

Համայնքի զինապարտների գրանցամատյանում գրառումներ է կատարվել 1-ից 6-րդ սյուներում, գրանցամատյանը վարվում է էական թերություններով՝ գրառումները չեն կատարվել ըստ զինապարտների ծննդյան տարեթվերի, առաջակվել է վերացնել այդ թերությունները, ինչպես նաև լրացնել 7- ից 14-րդ սյուները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 100 հավելվածով հաստատված Քարաբերդի

գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2009թ. դեկտեմբերի 10-ի N 11 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 24.01.2011թ. N 4 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի << Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին>> N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվելէ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջները և համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանները սկսել են վարել միայն 2010թվականից:

Բացի այդ հաշվառման մատյանները թերի են լրացվում (մասնավորապես՝ համայնքի ղեկավարի որոշումների հաշվառման մատյանում չկա գրանցված համայնքի ղեկավարի 08.09.2010թ. N6 որոշումը, համայնքի ղեկավարի կարգադրությունների հաշվառման մատյանում չկա գրանցված 30.08.2011թ. N5, 03.11.2011թ. N6 կարգադրությունները, աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանում չկա գրանցված 28.10.2011թ. N 4 հրամանը):

5. Համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 8-ի N8 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի նոր անձնագիրը: Աշխատակազմի քարտուղարը ընդգրկված է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում:

Այս առումով անհրաժեշտ է աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 05.04.2011թ-ի N01/15/1987-11 հանձնարարականը:

6. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրները թերի են լրացված և չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ (ծածկագիր՝ 3.1-1) Ժենյա Կոստանդյանի անձնագրի վավերականության ժամկետը լրացել է 2011թ. հունվարի 26-ին, սակայն անձնական գործում չկար նոր անձնագրի կամ հին անձնագրի (վավերականության ժամկետի երկարացման մասին նշումով) պատճենը:

7. Համայնքի ղեկավարը 22.06.2009թ. N15 կարգադրությամբ հիմք ընդունելով 22.06.2009թ կայացած մրցույթի արդյունքները և ղեկավարվելով <<Համայնքային

ծառայության մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով Գառնիկ Գրիգորյանին նշանակել է աշխատակազմի քարտուղար սահմանելով եռամսյա փորձաշրջան, հաշվի չառնելով, որ Գառնիկ Գրիգորյանը առաջին անգամ չի զբաղեցնում համայնքային ծառայության պաշտոն:

8. Համայնքի ղեկավարի 04.05.2009թ. N5 որոշմամբ հաստատվել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը և որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ կազմելու մասին համայնքի ղեկավարի 01.04.2008թ. N14 կարգադրությունը:

<< Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցումն իրավական ակտն ընդունած մարմինը կատարում է նույն տեսակի իրավական ակտով: Այս առումով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան անհրաժեշտ է վերանայել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումը և ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը և նոր կարգադրությամբ ուժը կորցրած ճանաչել 01.04.2008թ. N14 կարգադրությունը:

9. <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն համայնքային ծառայողներին (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը: Սակայն համայնքի ղեկավարը 01.09.2010թ. N15 կարգադրությամբ առաջին կարգի մասնագետ Արտյոմ Շավելյանին ազատել է աշխատանքից և առաջին կարգի մասնագետի պարտականությունները դրել է << գլխավոր հաշվապահի վրա, մինչև մրցույթի անցկացումը՝ հոկտեմբերի 12-ը>>:

Հաշվի առնելով, որ նման լիազորություն չունի, համայնքի ղեկավարը կարգադրությունների գրքում 15.09.2010թ. N15 կարգադրության վրա մակագրել է <<կարգադրությունը սխալ է արվել, համարել անվավեր, կատարել ուղղում >>:

Իր այս մակագրությամբ համայնքի ղեկավարը խախտել է << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը, ըստ որի իրավական ակտն անվավեր ճանաչելու համար իրավաստեղծ մարմինը պարտավոր է ընդունել իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին իրավական ակտ:

Նույն կերպ է վարվել համայնքի ղեկավարը 30.08.2011թ.-ին և ընդունել է N 5 կարգադրությունը՝ առաջին կարգի մասնագետ Սոնա Գուրգենյանին հերթական արձակուրդ և պարգևատրում տալու մասին և 05.09.2011թ.-ին կրկին կարգադրությունը անվավեր ճանաչելու մակագրություն է կատարել կարգադրությունների գրքում:

Անհրաժեշտ է << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի համաձայն անվավեր ճանաչել վերոնշյալ երկու կարգադրությունները:

10.Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 29.10.2010թ. N3, 28.10.2011թ. N4 հրամաններով՝ աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Ժենյա Կոստանդյանին, իսկ 30.09.2011թ. N3 հրամանով առաջին կարգի մասնագետ Սոնա Գուրգենյանին տվել է ամենամյա հերթական արձակուրդներ և պարգևատրումներ, վկայակոչելով, որ ղեկավարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 161-րդ հոդվածներով: Սակայն համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսում կիրառելուց անհրաժեշտ է ղեկավարվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ըստ որի համայնքային ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի տեսակներ միայն

երկարամյա ծառայության, ինչպես նա և ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար:

Այս դեպքում պարզ չէ, թե ինչի համար են աշխատակազմի քարտուղարի կողմից կիրառվել խրախուսանքները:

11. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին>> N13-Ա հրամանի 11-րդ կետի համաձայն ՝ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին որոշումն ընդունում է համապատասխան համայնքի ղեկավարը և ապահովում է այդ մասին հայտարարության հրապարակումը: Համայնքի ղեկավարը 20[illegible]թ. սեպտեմբեր ամսին ապահովել է աշխատակազմի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը, սակայն չի ընդունել որոշում:

12. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 26-ի <<Համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին>> N 05-Ն հրամանի համաձայն՝ աշխատակազմում վարվում է գրանցամատյան: Համադրելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացված գրանցամատյանի և համայնքային ծառայողների աշխատանքային գրքույկները՝ պարզվեց, որ աշխատակազմի քարտուղարի և առաջատար մասնագետ - հաշվապահի ընդհանուր աշխատանքային ստաժների վերաբերյալ տեղեկությունները գրանցամատյանում սխալ են լրացվել: Իրականում վերոնշյալ համայնքային ծառայողների ընդհանուր աշխատանքային ստաժները ավելին են, քան ներկայացվել են գրանցամատյանով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Քարաբերդ համայնքի ղեկավար

---------- Ցու. Շավելյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Քարաբերդ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Գ. Գրիգորյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության
ՀԳՄՏՍ գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Քարաբերդ համայնքի առաջատար
մասնագետ - հաշվապահ

---------- Ժ. Կոստանդյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

23.12.2011թ. **գ. Շենավան**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն (ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Շենավանի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Շենավան համայնքի ղեկավար Գ. Դունամալյանը, աշխատակազմի քարտուղար՝ Վ. Աբրահամյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Լ. Բաբայանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 7820.3 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 7365.8 հազ. դրամ, կամ կատարվել են 94.2%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 2491.5 հազ. դրամի դիմաց կազմել է 2037.0 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 81.8%:

Սեփական եկամուտներից թերակատարվել են հողի հարկի գանձումները՝ 354.9 հազ. դրամով, պահուստային հողերի վարձավճարները՝ 141.5 հազ. դրամով, այլ մուտքերը՝ 20.0 հազ. դրամով:

2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները աճել և կազմել են 95.1%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 81.6%-ով: Թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, պահուստային հողերի վարձավճարների և տեղական տուրքերի հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	2010թվական			Առ 01.10.2011թ.		
	Նախա-տեսված է	Փաստացի	%	Նախա-տեսված է	Փաստացի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**7820.3**	**7365.8**	**94.2**	**5493.5**	**5222.4**	**95.1**
Հողի հարկ	1600.4	1245.5	77.8	935.4	787.7	84.2
Գույքահարկ	473.1	495.3	104.7	315.0	226.7	72.0

Տեղական տուրքեր	30.0	69.7	232.3	27.0	-	-
Պահ.հողերի և գույքի վարձավճարներ	368.0	226.5	61.6	180.0	122.1	67.8
Այլ մուտքեր	20.0	-	-	15.0	64.8	432.0
Ընդամենը սեփական եկամուտներ	**2491.5**	**2037.0**	**81.8**	**1472.4**	**1201.3**	**81.6**
Պետական բյուջից տրվող դոտացիա	5328.8	5328.8	100.0	4021.1	4021.1	100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	**199.4**	**199.4**	**100.0**	-		-
Վարչական բյուջեից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ	199.4	199.4	100.0	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**7820.3**	**7365.8**	**94.2**	**5493.5**	**5222.4**	**95.1**

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով առաջացել են ապառքներ: 01.01.2011թ. դրությամբ ապառքները կազմել են հողի հարկից՝ 1016.3 հազ. դրամ, պահուստային հողերի վարձավճարներից՝ 145.9 հազ. դրամ:

Համայնքի տարածքում գործում է մեկ մթերային խանութ: Տեղական տուրք է սահմանվել ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 2000 դրամ և ծխախոտի վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 1750 դրամ: Նախատեսված տեղական տուրքը ստուգման պահին ամբողջովին գանձված էր:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 6967.0 հազ. դրամ, իսկ 2011թ. 9 ամիսներին՝ 4507.1 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. 9 ամիսներին

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.	Ստ.01.10.2011թ.
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	**6767.0**	**4507.1**
Աշխատավարձեր և հավելավճարներ	2757.0	2359.6
Պարգևատրումներ, դրամական խրախուս. և հատուկ վճարներ	262.0	-
Սոցիալական ապահովության վճարներ	843.4	545.7
Էներգետիկ ծառայություններ	45.0	18.0
Ներքին գործուղումներ	30.0	-
Տեղեկատվական ծառայություններ	27.8	68.8
Մասնագիտական ծառայություններ	121.8	
Շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում	200.0	
Գրասենյակային նյութեր	40.0	20.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	390.0	-
Տրանսպորտային նյութեր	880.0	660.0
Սոցիալական օգնություններ	1150.0	815.0
Այլ ծախսեր	20.0	20.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**200.0**	
Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում	200.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**6967.0**	**4507.1**

Հաշվապահական հաշվառումը վարվում է թերություններով՝ չի տարվել մեմորիալ-օրդերային եղանակով, կատարված ֆինանսական գործառույթներին հաշվային պլանին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չեն տրվել:

Գանձապահի հետ չի կնքվել պայմանագիր նյութական պատասխանատվության և իրեն հանձնված դրամական միջոցների պահպանման վերաբերյալ: Դրամարկղային գիրքը լրացվում է թերություններով՝ չեն լրացվել դրամարկղի մուտքի և ելքի օրդերների համարները, վճարման ցուցակների համարները, թղթակցող հաշիվները, կամ խախտվել է դրամարկղային գործառնությունների վարման կարգը:

2010թ.-ին վճարվել է մեկ գործուղում /Երևան, 4օր-30000 դրամ/, սակայն գործուղման գումարների հաշվարկման ժամանակ ավել է հաշվարկվել 5000 դրամ գիշերավարձի գումար:

2010թ. դեկտեմբեր ամսին հաշվարկված աշխատավարձերից և պարգևատրման գումարներից եկամտահարկի պահումները կատարվել են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան, ինչի արդյունքում պակաս է փոխանցվել պետական բյուջե 15827 դրամ եկամտահարկ: Նույն գումարի չափով աշխատողներին ավել է վճարվել աշխատավարձ և պարգևատրման գումարներ, այդ թվում՝ Գ. Դունամալյանին՝ 6827 դրամ, Լ. Բաբայանին՝ 3000 դրամ, Գ. Աթիկյանին՝ 3000 դրամ, Ս. Հայրապետյանին՝ 3000 դրամ:

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերում բացակայում են արձակուրդային գումարների հաշվարկները: Արձակուրդի տրամադրման կարգադրություններում և հրամաններում չի նշվում արձակուրդի վերջնաժամկետը կամ աշխատանքի ներկայանալու օրը:

Արձակուրդային օրերի ոչ ճիշտ հաշվարկելու հետևանքով(նույն օրերի համար վճարվել է արձակուրդային գումար և աշխատավարձ) 2011թ. ավելի է հաշվարկել աշխատավարձ Գ. Աթիկյանին՝ 10496 դրամ / հունվար և հոկտեմբեր/:

Արձակուրդային գումարների հաշվարկման ժամանակ միջին աշխատավարձը հաշվարկվել է ոչ սահմանված կարգով (չեն մտցվել ստացած պարգևատրումները, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը):

Առանձին դեպքերում գնված ապրանքանյութական արժեքների ծախսը հաստատող փաստաթղթերը լրացվել են թերություններով և բացթողումներով:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Շենավան համայնքի ավագանու որոշումները համարակալված են ըստ ավագանու նիստերի արձանագրությունների, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքի ավագանու որոշումները «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ավագանու նիստերին քննարկմանը ներկայացված են եղել մեկ հարց, ընդ որում պարզվել է որ երկու օրում կայացվել է երկու նիստ՝ 03.05.2010թ.-ին և 04.05.2010թ.-ին, 20.12.2010թ. և 21.12.2010թ., կամ 6 օրվա ընթացքում կայացել է 3

նիստ՝ 15.12.2010թ., 17.12.2010թ. և 20.12.2010թ. և այլն: Ինչը վկայում է, որ չի կատարվում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝ համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

2010 թվականի ընթացքում Շենավան համայնքի ավագանին կայացրել է 14 նիստ, ընդունել է 14 որոշում:

2010 թվականի ընթացքում Շենավան համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի I և III եռամսյակների հաղորդումները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

2010 և 2011 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ուղարկվել են պետական իրավական փորձաքննության).

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ուղարկվել է պետական իրավական փորձաքննության).

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

16.02.2010թ. թիվ 1-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, սակայն գյուղապետարանում փակցված չէ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Ավագանու հաստատմանը չի ներկայացվել 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ավագանուն չի ներկայացվել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի 2-րդ եռամսյակի հաղորդումը:

28.08.2010թ. թիվ 8 որոշման հավելվածը գյուղապետարանում բացակայում է:

2011 թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ Շենավան համայնքի ավագանին կայացրել է 14 նիստ, ընդունել է 14 որոշում:

2011 թվականի ընթացքում Շենավան համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2011 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց վարձավճարի և օտարման գների չափերը և պայմանները, մեկնարկային գները.

սահմանել է Շենավան համայնքի ավագանուց՝ համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը, հաստատել է ընդգրկվողների կազմը.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատվել է 2011թ. հողային հաշվեկշիռը.

2012 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումը ստուգման պահին դեռևս չէր ուղարկվել պետական իրավական փորձաքննության).

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը:

Հիմնականում համայնքի ավագանու որոշումների նախաբաններում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները: Նորմատիվ որոշումներում հիմնականում նշում չի կատարվում նրանց բնույթի մասին:

Գյուղապետարանը գտնվում է համայնքի մանկապարտեզի շենքում, զբաղեցնում է 2 սենյակ, որից մեկը ավագանու նիստերի սենյակն է: Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, որը գտնվում է աշխատասենյակում, ստուգման ժամանակ փակցված էր 2011թ. ապրիլ ամսվա ավագանու որոշում, 2011 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: Առաջարկվել է թարմացնել փակցված համայնքի ավագանու որոշումները, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան, լրացվում է թերություններով:

Համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է՝ որոշակի թերություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱԵԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 78 հավելվածով հաստատված Շենավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. մայիսի 5-ի N 11 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 24.11.2011թ. N 13-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնի փոխարեն հաստիքացուցակում առկա է աշխատակազմի առաջատար մասնագետ- հաշվապահի հաստիքը:

Այս առումով անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով աշխատակազմի հաստիքացուցակը համապատասխանեցնել համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի << Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին>> N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջները և համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մատյանները սկսել են վարել միայն 2010 թվականից, իսկ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2011 թվականից:

Բացի այդ հաշվառման մատյանները թերի են լրացվում և չեն կատարվել վերոնշյալ որոշման 2-րդ հավելվածի 3-րդ կետի << թ >>, << ժդ >>, <<ժե >> ենթակետերի պահանջները :

5. Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշմամբ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը համաձայն NN 1-3 հավելվածների:

Աշխատակազմի առաջատար և երկրորդ կարգի մասնագետները ընդգրկված են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում:

Այս առումով անհրաժեշտ է նշված համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 05.04.2011թ-ի N01/15/1987-11 հանձնարարականը և փոփոխություններ կատարել համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի N 3 որոշման մեջ:

6. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի խախտմամբ, մասնավորապես՝ առանձին դեպքերում չեն կատարվել կարգի 7-րդ կետի << ե >>, ենթակետի, 8-րդ կետի, 15-րդ կետի << ե >> , <<է>>, ենթակետերի պահանջները, առանձին

դեպքերում թերի են կատարվել կարգի 7-րդ կետի << դ >>, <<զ >> , <<իա >> ենթակետերի և 18-րդ կետի պահանջները:

7. <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

Համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 9-ի N 25 կարգադրությամբ հաստատվել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը, որը մինչև հիմա ուժը կորցրած չի ճանաչվել:

Ըստ ավագանու նիստերի արձանագրությունների՝ մատյանի 2009 թվականի փետրվարի 27-ի N 5 որոշմամբ համայնքի ավագանին հաստատել է հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը (որոշումը ընդունելուց հետո արձանագրությունում ջնջումներով փոխվել են ավագանու անդամները), որից հետո համայնքի ղեկավարի 09.03.2009թ. N 9 որոշմամբ (կրկին ջնջումներով) հաստատվել է հանձնաժողովների կազմը:

Ավագանին 22.07.2011թ. իր N 8 որոշմամբ առանց ուժը կորցրած ճանաչելու իր նախկին որոշումը հաստատել է հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և նոր անհատական կազմերը (որոշումը ընդունելուց հետո արձանագրությունում ջնջումներով կրկին փոխվել են ավագանու անդամները):

Համայնքի ղեկավարը ևս առանց ուժը կորցրած ճանաչելու իր նախկին որոշումը՝ 29.07.2011թ. N 21 որոշմամբ վկայակոչելով ավագանու 20.07.2011թ. N 7 որոշումը (N 7 որոշմամբ ավագանին հաստատել է համայնքի հողային հաշվեկշիռը) հաստատել է հանձնաժողովների նոր կազմերը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է համայնքի ղեկավարի պարզաբանումը ավագանու նիստերի արձանագրությունների մատյանում և համայնքի ղեկավարի որոշումների մատյանում հետին թվով ջնջումների փաստերի վերաբերյալ և ուժը կորցրած ճանաչելով նախկինում ընդունված իրավական ակտերը օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել հանձնաժողովների կազմերը :

8. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, իսկ 2008 թվականի դեկտեմբերի 12-ի N 06-Ն հրամանով աշխատակարգերում կատարվել են փոփոխություններ:

Համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 26-ի N 10 որոշմամբ ձևակերպվել է, որ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, իսկ 2009 թվականի հունիսի 1-ի N 13 որոշումով՝ իբրև հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը, իրականում թե ինչ է հաստատվել պարզ չէ, քանի որ աշխատակազմում չկար աշխատակարգերը:

Բացի այդ աշխատակազմում չկար նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստերի արձանագրությունների մատյան, որից հետևում է, որ անցկացված ատեստավորումների և մրցույթների ժամանակ հանձնաժողովի անդամներից մեկին կամայականորեն վերապահվել է հանձնաժողովի նախագահի տեղակալի լիազորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը, որից հետո սահմանված ժամկետում հրավիրել հանձնաժողովի աշխատակարգային նիստ,, հանձնաժողովի անդամների հետ քննարկել աշխատակարգերը և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9. << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով, իսկ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով հաստատված աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգում:

Այս առումով՝ համայնքի ղեկավարի 2009 թվականի մայիսի 14-ի N 12-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որից հետո համայնքի ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 25-ի N 22-Ն որոշմամբ նոր բովանդակությամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին նոր կանոնակարգը:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի ներքին կարգապահական կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

10. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝

գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը, խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները, 07.08.2009թ. N 18 որոշմամբ աշխատակազմի կրտսեր պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

11. Համայնքի ղեկավարի 2008 թվականի նոյեմբերի 22-ի N 31 որոշումով, հետագայում նաև 24.11.2008 թվականի նոյեմբերի 24-ի N 1 կարգադրությամբ՝ սխալ հղում կատարելով գործող օրենքի հոդվածը 2-րդ կարգի մասնագետ Գեղեցիկ Աթիկյանին շնորհվել է համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, սակայն <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների երրորդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին շնորհվում է համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն նշված դասային աստիճանը շնորհելու լիազորությունը վերապահված է աշխատակազմի քարտուղարին, այսինքն՝ համայնքի ղեկավարը իրականացրել է մի գործառույթ, որի լիազորությունը չուներ:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 30 որոշումով աշխատակազմի քարտուղար Վիկտորյա Աբրահամյանին շնորհվել է համայնքային ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան, սակայն <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների երկրորդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին շնորհվում է համայնքային ծառայության երկրոդ դասի խորհրդականի դասային աստիճան :

Այս առումով՝

1) համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ է անվավեր ճանաչել Գեղեցիկ Աթիկյանին և Վիկտորյա Աբրահամյանին դասային աստիճաններ շնորհելու մասին իրավական ակտերը.
2) համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ է առանձին որոշմամբ Վիկտորյա Աբրահամյանին շնորհել իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան դասային աստիճան.
3) աշխատակազմի քարտուղարի առանձին հրամանով Գեղեցիկ Աթիկյանին շնորհել համապատասխան դասային աստիճան:

12. Աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր է եղել 2010 թվականի ապրիլի 12-ից, սակայն այդ պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը հայտարարվել է միայն 2011 թվականի հունիսի 29-ին:

Այս առումով՝ խախտվել են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի<<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին >> N 13-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետը:

13. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի<<Համայնքային ծառայության թափուր պաշտոն

զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին >> N 13-Ն հրամանով հաստատված կարգի 16-րդ կետի համաձայն աշխատակազմում պետք է վարվի մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման մատյան, ինչը աշխատակազմում բացակայում է:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N 25-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների վերապատրաստման կարգի 23-րդ կետի համաձայն աշխատակազմում պետք է վարվի վերապատրաստման մատյան, ինչը աշխատակազմում բացակայում է:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի 11-րդ կետի համաձայն աշխատակազմում պետք է վարվի անձնական գործերի հաշվառման մատյան, ինչը աշխատակազմում բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է աշխատակազմում ստեղծել և սահմանված կարգով վարել վերը նշված մատյանները:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

Լ. Բերոյան

Շենավան համայնքի ղեկավար

Գ. Դունամալյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

Ժ. Ղազարյան

Շենավան համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

Վ. Աբրահամյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության
ՀԳՄՏՍ գործ. համակարգման բաժնի պետ

Վ. Հովհաննիսյան

Շենավան համայնքի
առաջ. մասնագետ-հաշվապահ

Լ. Բաբայան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

Ա. Բեջանյան